ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

«__»_____ 2024թ.

ք. Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացված ««Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը: Համաձայն այդ նախագծի տեղեկանք-հիմնավորման՝ ««Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերության հետագա գործունեությունը համարվում է ոչ նպատակահարմար և նախատեսվում է ««Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների տեղաբաշխումը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ենթակայության տակ, ինչը հնարավորություն կստեղծի աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Ելնելով վերոգրյալից ներկայացված Նախագծով առաջարկվում է փոխել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակների մեջ ավելացնելով Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանման գործառույթները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կազմված է «----» մարտի 2024թ.

և բաղկացած է 3 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Երևան քաղաքի ավագանու

__.____.2024թ.

N----Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ Տ.Ավինյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«25» դեկտեմբերի 2019թ.

Գրանցման համար՝ 286.215.1107479

ՀՎՀՀ՝ 02819226

25.12.2019թ.գրանցված կանոնադրության

թիվ _____փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի կողմից

_____ ____ 20___թ.

աշխատակից՝ _____ _____

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

Ե Ր Ե Վ Ա Ն 2024թ.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնադրության 1.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 2019 թվականի դեկտեմբերի 11-ի N 4678-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի կանաչապատման իրականացման, կանաչ տարածքների (տնկարկների) պահպանության, ոռոգման համակարգի կառուցման, արդիականացման ու վերանորոգման, լանդշաֆտային պլանավորման, քարտեզագրման, ջրային կառույցների շահագործման ու պահպանման և վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունման, հավաքի, տեսակավորման, վերամշակման, ժամանակավոր պահեստավորման և հանձնման հետ կապված աշխատանքների կազմակերպման նպատակով:».

2) Կանոնադրության 2.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Կազմակերպության գործունեության նպատակն է՝ Երևան քաղաքի կանաչապատումը, կանաչ տարածքների (տնկարկների) պահպանությունը, խնամքը, մաքրումը, ոռոգումը, անտառպաթալոգիական աշխատանքների իրականացումը, քաղաքային լանդշաֆտի պլանավորումը, մոնիթորինգի և կանաչ գոտիների քարտեզագրումը, Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործումը և պահպանումը, վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունումը, հավաքը, տեսակավորումը, վերամշակումը, ժամանակավոր պահեստավորումը, հանձնումը, վերաօգտագործումը, վտանգավոր թափոնների ընդունումը, հանձնումը և վնասազերծումը, խոշոր եզրաչափ ունեցող և մինչև 1 խորանարդ մետր շինարարական աղբի ընդունումը, ինչպես նաև շրջակա միջավայրին առնչվող այլ գործառույթների իրականացումը:».

3) Կանոնադրության 2.2-րդ կետի 13-րդ ենթակետից հետո լրացնել նոր 14-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14) Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանության իրականացում:».

4) Կանոնադրության 2.3-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) Վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունում, հավաքում, պահեստավորում, հանձնում, վաճառք՝ վերամշակման կամ վերաօգտագործման նպատակով:».

5) Կանոնադրության 2.3-րդ կետի 6-րդ ենթակետից հետո լրացնել նոր 7-րդ և 8-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանման համար ջրի իրացում.

8) Ոռոգման համակարգերի արդիականացում, նախագծում և կառուցում:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 25.12.2019թ. պետական ռեգիստրում գրանցված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: